ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Քաղաքացիական գործ
հա. ԵԴ2/0249/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,
ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ
ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24.01.2024 թվականին ք.Երևանում

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Արման Օհանյանս ուսումնասիրելով <<ԱՆՆԱՐԿԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր կամ <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ) ընդդեմ <<Վանաձորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Պատասխանող կամ <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ)՝ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18 ծածկագրով <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց
II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

11.01.2024 թվականին <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս ներկայացուցիչ Միքայել Յուրիի Ավետիսյանի, հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ <<Վանաձորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության՝ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18 ծածկագրով <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

19.01.2024 թվականին հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, հանձնվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

III
(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-

րդ հոդվածը, անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Անդրադառնալով գործը դատական նիստում քննության առնելու մասին Հայցվորի ներկայացուցչի միջնորդությանը, Դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ ***իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում****:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Դատարանն արձանագրում է, որ ելնելով ներկայացված վեճի և հայցապահանջի բովանդակությունից, առկա է կողմերի հետ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի քննության անհրաժեշտություն, որպիսի պարագայում առկա է առնվազն մեկ դատական նիստ անցկացնելու անհրաժեշտություն:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 234.5 և 234.6, 234.9, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Պատասխանող <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից պահանջել ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. **Պարզաբանել կողմերին, որ՝**

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործի քննությունն իրականացնել դատական նիստով, որը տեղի կունենա 28.02.2024 թվականին՝ ժամը 16:30-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու նստավայրի (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Խորենացի 162Ա) դատական նիստերի թիվ 7 դահլիճում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2024.01.25 09:10:09 AMT **Ա. ՕՀԱՆՅԱՆ**